


4162727

ԿՈՒԹԱՆԱԽԻ  
ՔԱՆԱԿՇԻՄԱՆ ՀԱՅԵՏԱԿԱՐԱՅԻՆ  
ՄՑՈՒՅԹԱՅԻՆ ՆԱԽԻԾ

**ԲԱՑԱՏՐԱԳԻՐ**




ԿՈՆԴ 1808 թ



Հին թաղամասերի վերակառուցումը ամենուրեք նպատակ է հետապնդում պահպանել և սերունդների փոխանցելի անցյալի ոչ միայն եզակի կառույցները, այլ ժողովրդական ճարտարապետության օրինակները՝ բնակելի թաղամասեր, նույնիսկ քաղաքն ամբողջությամբ վերցրած, որն ավելի խորն ու անմիջական պատկերացում է տալիս տվյալ ազգի կենցաղի և գեղարվեստական մտածելակերպի մասին:

Հնագույն քաղաքներում պատմական թաղամասերի պահպանումը և վերակառուցումը սոսկ պատմական և գեղարվեստական արժեքներ ունենալու ձգտում չէ, այլ բարոյական և քաղաքացիական մեծ պարտավորություն: Ժառանգության պահպանումը ավելի տվավորիչ և բովանդակալից է դարձնում քաղաքը, նրա ընդարձակ տարածական պատկերներում զգացնել է տալիս ժամանակային խորությունը և ընթեռնելի է դարձնում տվյալ ազգի ապրելակերպի և ճաշակի ձևավորման անցած պատմական ուղիին: Անցյալի պահպանումը անհրաժեշտ է ինքնաճանաչման համար, կամ թեկուզ հաջորդ սերունդների կողմից դատապարտված չլինելու համար:

ԿՈՆԴ 1856 թ




Սերունդները կարող են օգտվել ժառանգությունից, նրանցով բավարարել իրենց հոգևոր և կենսական պահանջները, սակայն իրավունք չունեն նվազեցնելու ժառանգության գեղարվեստական ու պատմական արժեքները, քանի որ մենակ իրենք չեն այդ արժեքների լիիրավ տերերը:

Երևանում շատ թե քիչ պահպանված թաղամասերից, որը իր վրա կարող է վերցնել պատմամշակութային ֆունկցիա, դա Կոնդ բնատեղին է: Այն գոյություն է ունեցել հնագույն ժամանակներից, ըստ Մխիթար Այրիվանցու տեղեկությունների “Մամուռի առու ” ջրանցքը, որը թվագրվում է I դար մ.թ.ա, վերականգնվել է XI դարում: Այս փաստը վկայում է, որ դեռ հնադարյան ժամանակներից Կոնդը եղել է բնակատեղի: Կոնդը պարսկական տիրապետության շրջանում Թափաբաշ անվամբ հանդիսացել է Երևանի 3 հիմանական թաղամասերից մեկը, մյուս երկուսն էին Շահարը և Դամիրբուլաղը: Այն 19-րդ դարի առաջին կեսին եղել է քաղաքի ամենահայաբնակ թաղամասը: 567 հայ ընտանիքներից 323-ը ապրել են Կոնդում:



## ԿՈՆԴ 1906 -1911 թ



Փաստորեն մեզ հասած այս թաղամասն ունի ուշ միջնադարյան կառուցապատման հենք: Երևանի մեզ հասած գլխավոր հատակագծերը ինժիներ Բանովի կողմից կազմված 1808 թ. Կոնդի քաղաքաշինական հյուսվածքը պահպանվել է մինչև մեր օրերը: Կոնդ թաղամասի պահպանումն ու զարգացումը նկատվում է նաև հետագայում կազմված 1856 թ. և 1906-1901 թթ -ի գլխավոր հատակագծերում: Կոնդ թաղամասը մեզ հասած եզակի ամբողջական հատված է, որտեղ պահպանվել է քաղաքաշինական կառուցվածքները փողոցային ցանցը, ներքին բակերի և աստիճանաձև անցումների համակարգը, որը կապում է քաղաքի հետ, Սարյան , Լեռ, Պարոնյան հատվածներում:



## ԿՈՆԴ 1985 թ



1985 թ. կազմված հենակետային հատակագծում դեռևս պահպանվում է Ռուսթավելի 50, 55, Ֆրիկի 21 արժեքավոր տները և այլն:



Հենակետային հատակագծում մուգ գծով նշված է հուշարձան կառույցները, իսկ բաց գույնով ֆոնային կառույցները:

Պատմական թաղամասը երկար տարիներ եղել է մոռացության մատնված և հեռու է եղել քաղաքաշինական բարերար միջամտությունից:

Երևանի գլխավոր հատակագծում Կոնդի կառուցապատումը կոմպլեքսային լուծում չստանալով դարձել է քաղաքի պրոբլեմատիկ հանգույցներից մեկը: Վերջին ժամանակների քաղաքի կենտրոնի կառուցապատման բարբարոս մոտեցումը էլ ավելի է խորացրել Կոնդի բնական լանդշաֆտի եվ քաղաքի կենտրոնի ծավալատարածակա լուծումների մեջ:

Ներկայացված նախագիծը նպատակ է հետապնդել այդ „պատահական,, Կառույցներով ստեղծել մի տարածական ամբողջություն, փորձելով արդարացնել դրանց գոյությունը:

# ԿՈՆԴ 2021 թ / ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ/

	ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՐ ԹԱՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ	74 574 Մ <sup>2</sup>
	ՆԵՐՔԻՆ ՓՈՐՈՑՆԵՐ, ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԱՆՑՈՒՄՆԵՐ	56 000 Մ <sup>2</sup>



Կոնդի բարձրունքի միջնամասում և Սբ. Հովհաննես եկեղեցու շրջակայքում, որտեղ հիմնականում պահպանվել և զարգացել է Կոնդի բնակատեղին իր ողջ պատմության ընթացքում, նախատեսված է ստեղծել պահպանվող և վերակազմվող գոտի: Այն կազմում է մոտավորապես 8 հա տարածք:

Այստեղ նախատեսվում է վերականգնել արժեքավոր տները, պահպանված կառույցները լրացնել Երևանի արդեն քանդված ժողովրդական ճարտարապետության օրինակներով, վերաստեղծել հին Երևանի հավաքական կերպարը (տվյալ ժամանակաշրջանին բնորոշ լուծումներով՝ ներքին բակեր, անցումներ, աստիճաններ, որը Սարյան Լեո փողացներից բարձրանում է Կոնդի բարձրունք և այլն) միաժամանակ համադրելով ժամանակակից ճարտարապետության հետ, ստեղծել մի միջավայր, որտեղ հինն ու նորն իրար հետ ստեղծում են երկխոսություն:





## Ա/ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ԹԱՂԵՐ

Կոնդ. թաղամասի պատմական միջավայրի վերակառուցումը Երևանի քաղաքի համար խիստ հրատապ է: Լինելով աշխարհի հնագույն քաղաքներից մեկը, չունենք մի ամբողջական թաղամաս, փողոց, բակ, որն արտացոլի հին Երևանի կոլորիտը: Վերջին 100-ամյակում անխնա ոչնչացրել ենք Երևանի կոլորիտին բնորոշ տներ, թաղեր, փողոցներ վկա արխիվային պահպանված լուսանկարները, որոնց նայելով զարմանում ես, թե ինչպես է մարդու ձեռքը բարձրացել եվ այդ ամենը ոչնչացրել է: Արամի և Բուզանդ փողոցների երկշաք տները, որոնք ձգվում էր մինչև Կոնդի բարձրունք, իրենց ճարտարապետական և գեղարվեստական արժեքով կարող էր զարդարել աշխարհի ցանկացած քաղաք, բայց մենք անխնա ոչնչացրեցինք այն և նմանատիպ հարյուրավոր տներ, փողոցներ քաղաքի տարբեր հատվածներում:

Կոնդ. թաղամասը, մեզ մնացած այն վերջին քաղաքաշինական հատվածն է, որտեղ պահպանվել է կառուցապատման հենքը, որը անհիշելի ժամանակներից հասել է մեր օրերը: Այս վերջին պատառիկի հենքով կարելի է ստեղծել և վերաստեղծել Երևանի կոլորիտը արտացոլող հավաքական կերպար:

Կվերակառուցվեն Կոնդի պատմական, հնագիտական եվ ճարտարապետական արժեք ունեցող փողոցները, տները, առանձին պատեր, անցումներ, աստիճաններ եվ այլ կառույցներ: Պահպանված լուսանկարներով եվ արխիվային նյութերով կվերակառուցվեն եվ կլրացվեն քաղաքի տարբեր հատվածներում քանդված տներով եվ դեռեվս պահպանված քարերով: Վերակառուցվող թաղերը նախատեսված է օգտագործել որպես բնակելի տներ, հյուրատներ, սրճարաններ, ցուցասրահներ, հուշանվերների խանութներ, արվեստանոցներ, արհեստանոցներ եվ այլը:

Հասարակական հատվածում նախատեսվում է փակ և բաց հանրային տարածքներ՝ /ԱՐՇԻԼ ԳՈՐԿՈՒ/ անունը կրեղ ցուցասրահային համալիր, որտեղ տարվա ընթացքում կարող են ներկայացվել տարբեր թեմատիկ ցուցահանդեսներ, ժամանակակից արվեստի գործեր, հայկական գորգեր և այլ ժողովրդական արհեստի և արվեստի նմուշներ: Այստեղ նաև տեղակայված են միջոցառումների դահլիճներ, որտեղ կարող են անցկացվել տարբեր վորքշոփեր, ներկայացումներ և հանդիպումներ: Առկա է նաև բացօթյա ամֆիթատրոն, որից բացվում է տարբեր տեսարաններ դեպի քաղաքը: Կոնդի բարձրունքի միջնամասում նախատեսվում է ուղանկյունաձով հրապարակ 50 x 30 մետր չափերի: Այստեղ նախատեսվում կազմակերպել վերնիսարժ եվ հասարակական այլ միջոցառումներ, ինչպես Մոն Մարտերում: Նախագծային առաջարկը նպատակ է հետապնդում ստեղծել մի այնպիսի միջավայր, որը կհամախմբի բնակիչներին, ստեղծելով նրանց համար նոր աշխատատեղեր, հնարավորություն կտա զարգացնել ժողովրդական արհեստի և արվեստի տարբեր ճյուղերը, միաժամանակ ստեղծելով ժամանցի անցկացման տարբնույթ հնարավորություններ, որը կնպաստի նայել տուրիզմի զարգացմանը:

Վերակառուցվող թաղերի կառուցապատման մակերեսը կազմում է 51.200 մ/քառ և կանաչապատ բակերը՝ 26.800 մ/քառ ընդհանուր մակերեսով:

Վերակառուցվող թաղերը իրենցից ներկայացնում են նկուղային, կամ կիսանկուղային հարկով և երկու վերգետնյա հարկերով տներ, համախմբված ներքին բակերի շուրջ: Վերակառուցվող թաղերում ստացվող ընդհանուր մակերեսը կազմում է 153.600 մ/քառ. մոտ 500 տուն :

## Բ/ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

Կոնդի ռելիեֆի եզրագծով Պարոնյան և Լեո փողոցներին հարող հատվածում որտեղ համեմատաբար քիչ են պահպանված արժեքավոր կառույցները և բլուրը կառուցապատվել է տարերայնորեն ,տարբեր հարկայնությամբ շենքերով/ 4-10 հարկ/ ,փակելով բնական լանդշափտի ընկալումը : Այս հատվածում նախատեսվում է կառուցել 4-18 հարկանի նորակառույց թաղամաս, բնակիչներին վերբանակեցնելու նպատակով: Նախատեսվում է ունենալ 145.000 մ/քառ. ընդհանուր մակերեսով մոտ 1500 բնակարան, մոտ 6000 մարդու համար: Ներկայիս Կոնդի բնակելի մակերեսը,սեպականության իրավունքով կազմում է 63 893 մ/քառ.

Շրջակայքի գոյություն ունեցող կառույցների հետ միասնական համալիր ստեղծելու համար, այստեղ նախատեսվում է աստիճանաձեղ ներքին բակերի շուրջ համախմբված միջին հարկայության բնակելի շենքերից անցում դեպի երեք բարձրահարկ ակցենտներ,որի 4-5 հարկը մեկ նախատեսվում է կանաչ բակային տարածք: Կոնդի ընդհանուր սկզբունքը կարծես լուծված վերտիկալ:

Բնակելի կառուցապատման ստորին հարկերում նախատեսվում է ավտոկայանատեղի 3-4 հարկով,իսկ ցուլոյային եվ առաջին հարկերում նախատեսված է գրասենյակային եվ առեվտրական տարածքներ: Ավտոկայանատեղին անմիջապես կից է Լեո և Պարոնյան փողոցներին, որտեղից և կազմակերպվում է մուտքն ու ելքը, ազատելով Կոնդի բարձրունքը տրանսպորտային ծանրաբեռնվածությունից: Առկա են նաև հասարակական ստորգետնյա ավտոկայանատեղեր, որոնք նույնպես վերելակներով կապվում են Կոնդի բարձրունքի հետ, ստեղծելով հետիոտնին հարմար տեղաշաժվելու հնարավորություն :

Գլխավոր Պողատայից Հրազդանի կիրճ տանել թունելների սկզբնամասից նախատեսվում է շարժասանդուխքներով կապ, Կոնդի բարձրունքի հետ,ունենալով ելքեր Սարյան ,Ռուսթավելի փողոցներ եվ սբ.Հովհաննես եկեցու բակ:Լեո փողոցից նախատեսվում վերելակով եվ հորիզոնական անցումով կապ, Կոնդի փողոցի հետ

Ներքին փողոցների եվ հրապարակների նախատեսված է հիմնականում հետիոտն շրջագայելու համար:

Ներքին փողոցները 56.600 մ/քառ մակերեսով նախատեսված է սալիկապատել կոպտատաշ քարով, մայթերը բազալտով, տրավերտինով,տուֆե սալերով:

Ներքին փողոցների մուտքերը և ելքերը 6 են, որոնք կապ են հաստատում Սարյան, Պարոնյան, Ֆրիկ փողոցների հետ: Գլխավոր գոյություն ունեցող մատքերից բացի, ավելացվել է Սարյանի կեղմից 5,6 Պարոնյանի 4 մուտքերը: Ամբողջ պարագծով ստեղծվել է հետիոտն և աստիճանաձև մուտքեր (եղածին ավելանում է 13 հինական մուտքեր, որոնք կապ են ստեղծում բարձրունքի և եզրագծով անցնող փողոցների հետ), տես ներքին փողոցների սխեման

# ԿԱՌՈՒՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ

## ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ԹԱՂԵՐՈՒՄ


1	2 243 Մ²	12	2 047 Մ²
2	1 599 Մ²	13	3 430 Մ²
3	2 857 Մ²	14	2 467 Մ²
4	1 773 Մ²	15	2 688 Մ²
5	1 542 Մ²	16	2 711 Մ²
6	3 541 Մ²	17	835 Մ²
7	926 Մ²	18	1 342 Մ²
8	2 551 Մ²	19	3 129 Մ²
9	3 693 Մ²	20	3 074 Մ²
10	1 505 Մ²	21	2 449 Մ²
11	4 795 Մ²		

$$51\,200 \text{ Մ}^2 \times 3 = 153\,600 \text{ Մ}^2$$

## ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԹԱՂԵՐՈՒՄ

22	6 531 Մ²
23	5 200 Մ²
24	1 225 Մ²
25	3 600 Մ²
26	1 400 Մ²







$$18\,000 \text{ Մ}^2 \times 8 \text{ հարկ} = 145\,000 \text{ Մ}^2$$





ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ




## ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

	ԻՐԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԱԾՔ	180 000 մ²
	ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ	43% 77 000 մ²
	ՆԵՐՔԻՆ ԲԱԿԵՐ, ԿԱՆԱԶԱՊԱՏ ՏԱՐԱՑՔՆԵՐ	26 % 46 800 մ²
	ՆԵՐՔԻՆ ՓՈՂՈՑՆԵՐ, ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԱՆՑՈՒՄՆԵՐ	31 % 56 000 մ²
	ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ԹԱՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ	153 600 մ²
	ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԹԱՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ	145 000 մ²

ՄՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՐԵՐ 45 000 մ² = 1500 ՄԵՔԵՆԱ









	ԴՊՐՈՑ	2 100 մ² x 3 = 6 300 մ²
	ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ	1 500 մ² x 3 = 4 500 մ²

ՄՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՐԵՐ 45 000 մ² = 1500 ՄԵՔԵՆԱ



ԿԱՆԱԶԱՊԱՏՄԱՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

## ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

	ԻՐԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԱԾՔ		180 000 Մ²
	ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍԸ	43%	77 000 Մ²
	ՆԵՐՔԻՆ ԲԱԿԵՐ, ԿԱՆԱԶԱՊԱՏ ՏԱՐԱՑՔՆԵՐ	26 %	46 800 Մ²
	ՆԵՐՔԻՆ ՓՈՂՈՑՆԵՐ, ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԱՆՑՈՒՄՆԵՐ	31 %	56 000 Մ²
	ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ԹԱՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ		153 600 Մ²
	ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԹԱՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ		145 000 Մ²
	ԴՊՐՈՑ	$2\,100\text{ Մ}^2 \times 3 =$	$6\,300\text{ Մ}^2$
	ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ	$1\,500\text{ Մ}^2 \times 3 =$	$4\,500\text{ Մ}^2$

ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐ  $45\,000\text{ Մ}^2 = 1500$  ՄԵՔԵՆԱ

### ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ԹԱՂԵՐՈՒՄ


<b>1</b>	2 243 Մ²	<b>12</b>	2 047 Մ²
<b>2</b>	1 599 Մ²	<b>13</b>	3 430 Մ²
<b>3</b>	2 857 Մ²	<b>14</b>	2 467 Մ²
<b>4</b>	1 773 Մ²	<b>15</b>	2 688 Մ²
<b>5</b>	1 542 Մ²	<b>16</b>	2 711 Մ²
<b>6</b>	3 541 Մ²	<b>17</b>	835 Մ²
<b>7</b>	926 Մ²	<b>18</b>	1 342 Մ²
<b>8</b>	2 551 Մ²	<b>19</b>	3 129 Մ²
<b>9</b>	3 693 Մ²	<b>20</b>	3 074 Մ²
<b>10</b>	1 505 Մ²	<b>21</b>	2 449 Մ²
<b>11</b>	4 795 Մ²		



$51\,200\text{ Մ}^2 \times 3\text{հաթկ} = 153\,600\text{ Մ}^2$


### ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԹԱՂԵՐՈՒՄ

<b>22</b>	6 531 Մ²
<b>23</b>	5 200 Մ²
<b>24</b>	1 225 Մ²
<b>25</b>	3 600 Մ²
<b>26</b>	1 400 Մ²

$18\,000\text{ Մ}^2 \times 8\text{հաթկ} = 145\,000\text{ Մ}^2$



	ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ ԹԱՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ	153 600 մ²
	ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԹԱՂԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԸ	145 000 մ²





ԿՈՆԴ թաղամասի կառուցապատման աշխատանքների արժեքի մոտավոր հաշվարկը

h/h	աշխատանքների անվանում	Չափի միավոր	Քանակ	Արժեքը ԱՄՆ դոլար	
				միավոր արժեք	ընդամենը մի.դոլար
1	2	3	4	5	6
1	Գոյություն ունեցող անարժեք կառույցների քանդում շին.աղբի հեռցում,տարածքի մաքրում փոքր մեխանիզմով եվ ձեռքով	խմ	200 000	10	2,0
2	Նոր շինությունների հիմքերի հեղային աշխատանքներ	խմ	400 000	5,4	2,1
3	Վերակառուցվող եվ կառուցվող երկհարկանի հուշարձանշենքերի արժեքը	քմ	153 000	1 000	153,0
4	Ժամանակակից բնակելի կառուցապատում	քմ	145 000	700	87,0
5	ճանապարհների/брусчатка/,մայթերի,աստիճանների,արտաքին ինժինեռական կոմունիկացիաներ եվ այլ աշխատանքներ	քմ	56 000	50,9	2,8
6	տարածքի բարեկարգման եվ կանաչապատման աշխատանքներ	քմ	46 800	22	1,0
	ընդամենը				247,9
	տեխ.հսկողություն 1				2,5
	հեղինակային հսկողություն 0,6				1,5
	ընդամենը				251,9
	չնախատեսված ծախսեր 5				12,5
	ընդամենը				264,4
	Ա.Ա.Հ. 20				52,8
	ԱՄԲՈՂՋԸ				317,2

2009թ. կատարված տեղազննության արդյունքներից երևում է, որ սեփականության իրավունքով Կոնդեցիներին պատկանող շինությունները կազմում են 63893 մ/քառ, իսկ ինքնակամ շինությունները 3863 մ/քառ:


Առաջարկվող նախագծում նորակառույցների ընդհանուր մակերեսը կազմում է 145.000 մ/քառ, իսկ վերակառուցվող թաղերը ընդհանուր մակերեսը կազմում է 153.000 մ/քառ՝ մոտ 500 տուն:

Ելնելով այս ցուցանիշներից Կոնդի բնակիչների տարաբնակեցման պլաններում հնարավոր է բազմաթիվ լուծումներ,որը նպատակահարմար կլինի Կոնդի բնակիչների համար եվ ներդրումների շահավետության տեսանկյունից

- Սեփական միջոցներով իր տան վերակառուցում եվ կառուցում
- Նոր բնակարանների հատկացում տեղում
- Նոր բնակարանների հատկացում այլ վայրերում
- Բնակարանների փոխհատուցման տրամադրում


Ներդրումային ծրագրի իրագործման տեսանկյունից հնարավոր է ստեղծել բաց բաժնետիրական ընկերություն, ներգրավելով տարբեր մարդկանց և ընկերությունների ֆինանսական միջոցներ, բնակիչները ներդրելով իրենց սեփականության իրավունքով պատկանող գույքը և այլն: Այն կստեղծի փոխադարձ շահագոգովածություն, որը կնպաստի թաղամասի վերակառուցմանը:

Այս ծրագիրը կլինի կոնկրետ եվ իրատեսական,երբ կունենանք բնակչության քանակը, սեփականատերերի ցանկությունը եվ այլն:



# ԻՐԱՑՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ ՄԱԿԵՐԵՍԸ

180 000 m<sup>2</sup>






# ՆԵՐՔԻՆ ՓՈՂՈՅՆԵՐ, ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ, ԱՆՑՈՒՄՆԵՐ

**56 639 m<sup>2</sup> = 31 %**


▬▬▬▬▬▶ ՏՐԱՑՊՈՐՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐ ԵՎ ԵԼՔԵՐ

▬▬▬▬▬▶ ՀԵՏՅՈՏ ԱՍՏԻՃԱՆՆԵՐՈՎ ՄՈՒՏՔԵՐ ԵՎ ԵԼՔԵՐ

▬▬▬▬▬▶ ԱՍԵՐԳԵՏՆՅԱ ԱՎՏՈՎԱՆԱՏԵՐԻՆԵՐԻ ՄՈՒՏՔԵՐ ԵՎ ԵԼՔԵՐ



77 125 m<sup>2</sup> = 43%



**46 800 m2 = 26%**





ԿՏՐՎԱԾ Զ ԸՍՏ ԼԵՆ-ՊԱՐՈՆՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ



ՓՈՒՎԱԾ Զ ԸՍՏ ՊԱՐՈՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ



ՀԱՏՎԱԾ ԸՍՏ ԼԵՆ ՓՈՂՈՑԻ

ՓՈՒՎԱԾ Զ ԸՍՏ ԼԵՆ-ՍԱՐՅԱՆ ԱՆԿՅՈՒՆՆԱՅԻՆ ՀԱՏՎԱԾԻՑ
































- 1** Հ.Կոջոյան 1927թ. Կոնդի տեսարան Փ.Բյուզանդ-Սարյան հատվացից
- 2** Հ.Կոջոյան 1927թ. Կոնդի տեսարան Պարոնյան հատվացից
- 3** Հ.Կոջոյան 1927թ. Կոնդի տեսարան Պարոնյան- Լեռ հատվացից, մզկիթ տանող փողոց



Կոնդի տեսարան Փ.Բյուզանդ փողոցից 1930թ.

















ՄԵԼԻՔ ԱՂԱՍԱԼՅԱՆԻ ՏԱՆ ԴԱՐՊԱՍԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԷՍԶԻԶ







ՌՈՒՍԹԱՎԵԼԻ 57 ՏԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ







ԿՈՆԴԻ 253  
ՏԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԷՍԿԻԶ

